

ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովների միջև

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ստեփանակերտ, 17.07.2012թ.

2012թ. հուլիսի 17-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովների նախագահներ Պյոտր Դենիսենկոն և Ռաշիդ Պետրոսյանը ստորագրեցին հանձնաժողովների միջև փոխըմբռնման պայմանագիր: Պայմանագիրը միտված է աջակցել երկու Հանրապետություններում ժողովրդավարական գործընթացների և մարդու իրավունքների ու ազատությունների լայնորեն ընդունված ժողովրդավարական նորմերի հաստատմանը, խորացնել ընտրական օրենսդրությունների ոլորտում երկկողմ գործակցությունը, ինչպես նաև ընտրական գործընթացներում ներդնել արդի տեխնոլոգիաները:

Կողմերը կխորացնեն գործակցությունը հետևյալ ուղղություններով.

Փորձի փոխանակում, ընտրական օրենսդրությունների կատարելագործում, քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման երաշխավորում, ընտրական գործընթացներում կուսակցությունների գործունեության իրավական կարգավորում, ընտրական գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների ներմուծում, ընտրական գործընթացի մասնակիցների իրավական և ընտրական մշակույթի խթանում, ընտրական վարչարարության մարմինների որակավորման բարձրացում: Հուշագրի կետերը գործնականում կիրականացվեն համատեղ աշխատանքային խմբերի ստեղծմամբ, հանձնաժողովների միջև ընտրական գործընթացների վերաբերյալ հետազոտությունների և օրենքների նախագծերի փոխանակմամբ, դիտորդական առաքելությունների իրականացմամբ և փորձի փոխանակմանը նպաստող կողմերի համար ընդունելի այլ ձևերով:

